№ 6 ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐ 7

1896

ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐ 7 № 6

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրեր

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղռն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանք. վեցամսեան 5 ֆրանք: Հասցէ՝ Téhéran Rédaction ASTCH-AREVELIAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերն:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով. իւրաքանչիւր բառին 1 շահի:

## ԲԱՑՒԵՑ Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 1896 Թ.

### Ա. Տ. „ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ“ Ա. Տ.

Բաժանորդագինն է Թէհրանում տարեկան 12 ղռան վեցամսեայ 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղռան, վեցամսեայ 8 ղռան: Ռուսաստան տարեկան 3 րուբլի վեցամսեայ 2 ր. Օտար երկիրներ 8 Ֆրանկ վեցամսեա 5 ֆ: Թէհրանում ձեռքով ծախուածները հատը 6 շահի: բաժանորդագինը կանխիկ է:

Բաժանորդագրութեան համար դիմել ուղղակի խմբագրութեան: Téhéran, Redaction Astgh-Arevelian.

### ՄԱՀԱԳՈՅԺ

Նոր Ջուղայում՝ անբուժելի հիւանդութեամբ ի տէր հանգեաւ պ. Մելքոն Մարգարեան ազնիւ և ազգասէր հոգին:

Մեզ խորին վիշտ պատճառող այդ մահուան առթիւ՝ յայտնում ենք մեր անկեղծ ցաւակցութիւնը նրա ընտանեաց և Ն. Ջուղայի հասարակութեան:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

----

Բարոյական սկզբունք կայ.----ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ամուսնութիւն պարսկահայոց մէջ. Նամակ Դավրէժից. Նամակներ. Ն. Ջուղայից. ԲԺՇԿԱԿԱՆ Ինֆլոէնցիայ. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ Աստղ-Արեւելեանի պատասխաններ. ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ. Գլամոց արժէք. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Հայկական գրականութեան ակեղարը 500 թւականի. Դէպի Հայաստան:

### ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ ԿԱՅ

----

Երկպառակութիւն, կռիւ, խռովութիւն կան և շարունակւում են թէ մամուլի, թէ ազգայնոցս և թէ իւրաքանչիւր հասարակական գործերի մէջ: Այո, կռիւներ, վէճեր, կուսակցութիւններ, երկպառակութիւններ մարդկային առաջադիմութեան անհրաժեշտ պայմաններն են, որի ապացուցութեան համար բազմապիսի փաստերի կարիք չկայ. Նոյն իսկ հայկական մի առած որ ասում է. «Ջուրը մինչև չպղտորի չի պարզի» ապացուցանում է, որ դա այնպիսի մի անուրանալի ակսիօմայ է, որի դէմ հակառակել աւելորդ է: Սակայն տեսնենք արդեօք բոլոր կռւողները, խռովութեանց շարժառիթ դարձողները, բոլոր կուսակցութեանց պատճառ դառցողները, ջուրը պարզելու, բարուն և գեղեցկին հասնելու, ազգային կամ հասարակական գործը բարւոք դրութեան մէջ դնելու նպատակաւ են կուսակցութեանց և երկպառակութեանց շարժառիթ և հերոս հանդիսանում, թէ ուրիշ ձգտումներ, ուրիշ անձնական հաշիւներ ի նկատի ունենալով ջուրը պղտորում են և աշխատում են պղտոր ջրում ձուկ որսալ: Եւ մենք համարձակ կասենք, որ մեր կուսակցութեանց և զանազան տեղերում յառաջացած խըռովութեանց եթէ ոչ պարագլուխները գոնէ նոցա հետևողները ըստ մեծի մասին պատկանում են վերջիններին: Տեսնում ես, օրինակ մի գաւառական փոքրիկ քաղաքում մի խումբ ազգայինների մէջ աղմուկ, խռովութիւն, երկպառակութիւն. չորս ու կէս հայը բաժանւում են 7 կուսակցութեան և այն՝ զուրկ որ և է սկզբունքից, միայն անձնական. ինչու, հետաքրքրւում ես իմանալ, նորա համար որ դիցուք մի երէցփոխ կամ մի ուսուցիչ դուր չէ գալիս մի հաստագլուխ խանի, նորա քմքին հաճելի չէ. վերջինս իւր բարեկամին նորա տեղ դնելու, կամ իւր ազդեցութիւնը ցոյց տալու համար հաւաքում է իւր շուրջը իւր խնամիներին կամ մի քանի հացկատակների, դրանց մի քանի անգամ ճաշ կամ ընթրիք է տալիս, որ տեղ և յայտնում է իւր բողոքը հալածելու լէշեալին, իսկ մի քանիսը առանց քննելու և խորը մտնելու իրենց հրաւիրողի անձնական հաշիւների մէջ՝ ընդ դէմ այդ մի քանի հասարակական գործիչների, միանում են նորա հետ և ահա սկսւում է երկպառակութիւնը. էլ քննի թէ այդ հասարակական գործիչը, մի կողմ դրած նորա մասնաւոր անձանց հետ ունեցած անձնական հաշիւները, ունի՞ արդեօք ընդունակութիւն իւր ստանձնած պաշտօնի մէջ և թէ կատարո՞ւմ է այդ պաշտօնը խղճի մտօք, թէ ոչ, այդ չկայ. բաւական է, որ նա իւր բարեկամների դասին չէ պատկանում, ուրեմն նա և անընդունակ է, և մինչև իսկ ապօրինի. բայց ապացոյցներ եթէ պահանջելու լինիս մէկից կամ միւսից՝ նա կշփոթուի և կտեսնես այս խօսքերը կպատասխանի. «ես ինչ գիտեմ, այս ինչ պարոնը, որովհետև ասում է վատ է այդ ուսուցիչը, ուրեմն վատ է»: Ահա թէ ինչպէս այնուհետև տուժում է հասարակ ժողովուրդը. որին այսպիսի դէպքում ճարպիկ մարդիկ իրենց ձեռքում գործիք են դարձնում. մոլորեցնելով նորա միտքը՝ նորա անունով ամենատեսակ լրբութիւններ են գործում: Ուրեմն նշանակում է որ չկայ սկզբունք, որին երբև մի սուրբ իդէալի ձգտէին ընդհանուր ուժով չխառնելով անձնականը, եսականը և կոյր կիրքը:

Կուսակցութիւնք, որոնք հիմնուած են բարոյական լայն և ազնիւ սկզբունքների վրայ, ոչ միայն վնասակար չեն մեզ համար, այլ մինչև իսկ շատ անհրաժեշտ, որոնք մեզ կտանին յառաջ. իսկ անձնական, եսական և կամ բարոյական դիմակի տակ ծածկուած կուսակցութիւնք, որ ունեն նեղ և անձնական գծուած հաշիւներ, միշտ ջլատում և քայքայում են մեր միացեալ ուժերը, կորցնում են մեր ունեցած եռանդը և սէրը դէպի որ և է սուրբ և նուիրական գործ: Այդպիսի կոյր կրքի կուսակցութիւններ անպակաս են մեզանում. ուրեմն բարոյական սկզբունքները դեռ չեն թաղաւորում մեր սրտերում, որին պէտք է ձգտենք, որով միայն կարող կլինենք պղտորած ջուրը պարզել և ոչ թէ այնպէս պղտորենք, որ պարզելը անհնարին լինի մեզ: Այդ է կատարելութեան հասնելու ընտիր ճանապարհներից մէկը:

Բ. Ս.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆ ՊԱՐՍԿԱՀԱՅՈՑ ՄԷՋ

----

Ինչպէս տեսանք, ամուսնացողների ծնողքն տուին, առին, առանց իւրեանց զաւակի կամքն իմանալու: «Տղաս ով է, ինչացու է որ իմ կամքին չհնազանդէ. գլուխն փշրել կտամ: Տէր դու ազատես. սերմն փչացել է, ով էր տեսել և բերէն համարձակուէ հօր կամքին հակառակելու, չի ուզում չուզէ, ես իմ համար հարս եմ բերում, իրան ինչ վերաբերութիւն ունի…»: Բայց ինչպէս ասացինք տղան ուրախ է որ ամուսնանում է, առանց ամուսնութեան խորհուրդն հասկանալու:

Ծնողքն նշանադրութեան պատրաստութիւնն տեսնում են և քանի հրաւիրեալների հետ, տղան հետներն առած մտնում են խանում խնամոնց տունը: այստեղ պէտք է ասել որ ամուսնացողներն միմեանց չեն էլ հանդիպել, այլ այն ժամա՛ այլ են միմեանց հանդիպում

